Աշխատանքային տարբերակ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հասարակայնության հետ կապերի ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը, ՇՊՀ-ի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, ՇՊՀ-ի Արտաքին համագործակցության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

1.2. Սույն Ընթացակարգը սահմանում է ՇՊՀ-ի գործունեության լուսաբանման, հասարակական կարծիքի ձևավորման, հետադարձ կապի հաստատման, արտաքին և ներքին շահառուների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն ու գործիքակազմը:

1.3. Սույն Ընթացակարգը տարածվում է ՇՊՀ-ի ներքին և արտաքին շահառուների վրա:

2. Համալսարանի գործունեության լուսաբանման մեխանիզմներ

2.1. ՇՊՀ-ի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումն անցկացվող միջոցառման մասին առնվազն 1 օր առաջ տեղեկացնում է Արտաքին համագործակցության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) տնօրենին՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն տվյալ միջոցառման բնույթի, նպատակի, օրակարգի և կազմակերպիչների մասին:

2.2. Կենտրոնի համապատասխան աշխատակիցները պարտավոր են ՇՊՀ-ում անցկացվող միջոցառումների մասին տեղեկատվական տեքստեր և լուսանկարներ հրապարակել ու տարածել համալսարանի կայքէջում և սոցիալական հարթակներում:

2.3. Կենտրոնի համապատասխան աշխատակիցներն ստեղծում են տեղեկատվական

նյութերի արխիվ:

2.4. Կենտրոնն արտաքին և ներքին շահակիցների համար shsu.am կայքէջի և սոցիալական ցանցերի միջոցով ապահովում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ ընդունելության կարգի, քննությունների, դասացուցակների, միջազգային կրթական ծրագրերի և այլնի մասին:

2.5. Կենտրոնն ի շահ բուհի և բուհի ուսանողության հնարավորությունների զարգացման՝ համագործակցում է համայնքային տարբեր շահակից կառույցների և համալսարանի կրթական ծրագրերով շահագրգիռ կողմերի հետ:

2.6. Կենտրոնը library.shsu.am կայքէջի միջոցով ապահովում է էլեկտրոնային գրադարանի պարբերաբար թարմացումը:

2.7. Կենտրոնն աշխատանքներ է իրականացնում ՇՊՀ-ի ներգրավվածությունը վարկանիշային համակարգերում ապահովելու համար:

3. Հասարակական կարծիքի ձևավորման և հետադարձ կապի հաստատման գործիքակազմ

3.1. Կենտրոնի համապատասխան աշխատակիցները վերահսկում են ստացած էլեկտրոնային նամակների և հարցումների մշակման և տեղեկատվության տրամադրման գործընթացը:

3.2. Կենտրոնը յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրության նպատակով իրականացնում է առցանց հարցումներ և վերլուծված կարիքների հիման վրա, մեկամսյա ժամկետում, համապատասխան աշխատակիցներն իրականացնում են հետադարձ կապի ապահովում:

4. Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող գործիքակազմ

4.1. Կենտրոնը յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսին կազմակերպում է մամուլի ասուլիս՝ որի ընթացքում բուհի ռեկտորը ներկայացնում է հանրային հաշվետվություն համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ:

4.2. Կենտրոնը համալսարանի կայքէջում պարբերաբար հրապարակում է տարեկան հաշվետվություններ համալսարանի գործունեության, հոգաբարձուների խորհրդի որոշումների, ռեկտորատի և գիտական խորհրդի որոշումների, ֆինանսական հաշվետվությունների և այլնի վերաբերյալ:

4.3. Կենտրոնը պարբերաբար համալսարանի սոցիալական ցանցերի էջերում և կայքէջում հրապարակում է համալսարանի ընթացիկ իրադարձությունների և միջոցառումների մասին տեղեկատվություններ:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն Հայեցակարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխությունները և լրացումները հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

5.2. Սույն Հայեցակարգն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: